

գոնիզմի մէջ ընկնում։ Կանուք իմացարանութեան մէջ բարձրացաւ նախ մօնիզմից նրանով, որ սկսեց զգայութեան և մտածութեան դուալիզմից.—Դեկարտի տարածականութեան և մտածողութեան գոյարանական դուալիզմը շուռ տուեց իմացարանական դուալիզմին։ Իսկ ընդհանուր փիլիսոփայութեան մէջ նա բարձրացաւ մատերիալ-մօնիզմից նրանով, որ խստիւ զատեց և հիմնական գծեսով նկարակերտեց բարու գեղեցկի և ճշմարտի աշխարհները<sup>\*</sup>)։

(Նարունակելի)

3. 3.

### ԱՆԳՐԿՈՎԿԱԾԻ ՀՅՂԱՑԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

II.

Վ. Բ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ո Ղ Ա Յ Ի Ն պ ա յ մ ա ն ն ե ր ը .

Անգրկովկասում պատմական անցեալով և կուլտուրայով աչքի են ընկնում և վրացիք։ Վրացիք Անգրկասիան—յարեթական ժագում ունեն<sup>1)</sup> և Անգրկովկասի ամենահին ընակեչներից են։ Վրաստանը իր պատմական անցեալով բաւական նման է Հայաստանին, և հինգ ոկզբե շրջանում այդ երկու երկըները ուղցիալական ըանական նման կարգեր են ունեցել։

Վրաստանի հին անցեալի մասին պատմական տեղեկութիւններ հաղորդում են Քսենեֆոնտ և Ստրաբոն։ Վրաստանում, շնորհիւ երկրի դիրքի, շատ զարգացած էր ցեղային ու բոյն կեանքը. Երկիրը բաժանուած էր բազմաթիւ մանրիկ տոհմերի, իշխանութիւնների մէջ։ Տոհմերը կոչւում էր մամասալիս, որ նշանակում է տան հայր կամ տոհմապետ։ Մամասալիսները բաւական կային, բայց ժամանակի ընթացքում նրանցից Մցիւթի մամասալիսը աւելի է աչքի ընկնում և միւսների վերաբերմամբ առաւելութիւններ ձեռք բերում։ Թէև նա դարձեալ մամասալիս էր կոչւում, բայց իւր իրաւունքներով նման-

\*.) Դեռ մինչև այժմ էլ չի ազատուել մտածողութիւնը մատերիալ-մօնիզմից. բաւական է յիշել վոլունատարիզմը, ինտելեկտուալիզմը հոգեբանութեան մէջ, անտեսագիտական մատերիալիզմը պատմափելիսոփայութեան մէջ ևայլն...

1) Պրօֆ. Հ. Մարը. Իշտորիա Հրազդ 1906. Եր. 17.

ւում էր թագաւորին։ Վրաստանի հին սօցիալական կազմի մասին Ստրաբոնը հետևեալն է պատմում։ Վրաց տէրութեան դլխաւորն էր թագաւորը։ ոա ընարւում էր մեռած թագաւորի աղքականներից աւագութեան կարգով։ Կար և թագաւորի երկրորդը, որի ձեռքում էին դժուում գատավարութիւնը և զօրքի հրամանատարութիւնը։ Տէրութեան մէջ մեծ զիրք ունէին քըմերը։ Նրանք ի միջի այլոց վարում էին և միջաղգային գործերը։ Ժողովուրդը բաժանուում էր զինւորականների և երկրագործների։ Կային և ստրուկներ, որոնք թագաւորին էին պատկանում և նրան ծառայում։ Տիրում էր ցեղային, տոհմային ստացուածքի համայնականութիւն։ կալուածքները կառավարում էր տոհմի աւագը։ Ստրաբոնի հազորդած այս տեղեկութիւնները վերաբերում են իբերիացիներին։ միւսների մասին ոչինչ յայտնի չէ<sup>1)</sup>։

Ստրաբոնի հաղորդածից և ուրիշ աղքային աղքեւներից էլ ինչպէս երեսում է, Վրաստանում շատ հին ժամանակից սկսած տիրում էր տոհմապետութիւն։ Ժողովուրդը բաժանուած էր տոհմերի (նաթէսամի)։ Խւրաքանչիւր տոհմ անկախ էր և ունէր իր կառավարութիւնը։ Տոհմերը՝ ըստ իրենց մեծութեան, ուժի պետութեան մէջ տարբեր գիրք, համարում ունէին։ Մէծ, զօրեղ տոհմին պատկանողները կոչւում էին «Դիդգվարեաններ», աւելի փոքր տոհմին պատկանողները՝ «աղնաւուրներ» կամ «գվարեաններ», իսկ անտոհմ մարդիկ կոչւում էին «ուգվարոններ» կամ «ուազնոններ»<sup>2)</sup> Ժողովուրդը, սկզբում ազատ էր, շատ իրաւունքներ ունէր. դեռ սօցիալական ստորագասումը մեծ չէր։ Ժողովուրդը պարապում էր երկրագործութեամբ և պատերազմներով։ Ստրուկները օտար ծագման էին պատկանում. նրանք թագաւորների նորտերն էին և ապրում էին նրա հողերի վրայ։ Թագաւորութիւնը, կարելի է ասել, որ մինչեւ երրորդ դարի կէոը (250 թ. Ք. ա.) գոյութիւն չունէր։ Վրաց առաջին թագաւորը համարւում է Փարնաւազը (250 թ. Ք. ա.)։ Սա ազգով պարսիկ էր և աշխատում էր երկրի մէջ մտցնել պարսկական կարգեր։ Արա ժամանակ տոհմապետութիւնը փոխւում է եշխանութեան։ Երկիրը բաժանուում է 9-ը սատրապութիւնների, որոնց կառավարիչները կոչւում էին էրիստաւներ, այսինքն ժողովրդեր գլխաւորներ։ Էրիստաւութիւններն էլ բաժանուում էին մովովութիւնների, որոնք տըւում էին մանր եշխաններին։

1) И. Джаваховъ Государственный строй древней Грузии и древней Армении 1905 Եր. 8.

2) И. Джаваховъ. а. о. о.

Էրիստաւութիւնը սկզբում նշանակովի էր, բայց ժամանակի ընթացքում դառնում է ժառանգական։ Էրիստաւները ունեն լայն իրաւունքներ։ Երանց երկրում համարեա թէ թագաւոր էն։ Նրանց իշխանութեան տակ գտնում էին զօրապետներ և հազարապետներ։ Էրիստաւները ունեն իրանց զլխաւորը, որը կոչւում էր էրիստաւների—էրիստաւ կամ սպարապետ (զօրեի հրամանատար<sup>1)</sup>)։ Էրիստաւները ընդհանուր առմամբ անկախ էին, շարունակ ձգտում էին թագաւորին չենթարկուել և զբան նպաստում էին Վրաստանի արտաքին թշնամիները։ Թագաւորութիւնը մեծ մասամբ թոյլ էր, երկրի մէջ տիրում էր լայն ապակենտրոնացում<sup>2)</sup>։ Էրիստաւների անջտական ձգտումները մի կողմից, հզօր հարեւանների միջամտութիւնը երկրի գործերի մէջ միւս կողմից շարունակ արդելք էին հանդիսանում թագաւորութեան զօրեղանալուն։ Վրաց թագաւորութիւնը քիչ թէ շատ աչքի ընկնող գեր է խաղում միայն Փարնաւազ և վախթանգ գուրգասլան թագաւորի ժամանակ, իսկ ընդհանրապէս թոյլ էր։ Աետագայում այնքան ընկած էր թագաւորութեան նշանակութիւնը, որ Բագրատունիները (սկսած V. դ. Ք. յ.) չեն ուղղում թագաւոր տիրողութ կրել։ Վրաց թագաւորութիւնը մկում է ուժեղանակ X դարի վերջերքին։ Դաւիթ Կիւրապաղատին (վերին Քարթալինան կամ Մցիւկթեան բագրատիդ) յաջողութ է առաջ բերել պետական որոշ կենտրոնացում։ Արևադ—Քարթալինան տէրութիւնը (985—1442) բաւական ուժեղանում և աչքի ընկնող գեր է խաղում։ Տանաւանդ XI և XII դարերում։ Այդ ժամանակներում տէրութիւնը բաժանվում էր 15 էրիստաւութիւնների, որոնցից 7-ը Քարթալինայում էին, իսկ 8-ը Արևադիայում<sup>3)</sup>։ Այս էրիստաւութիւններն էլ էլի շուտով գլուխ են բարձրացնում և խանգարում պետութեան կենտրոնացմանը։ XV դարում թագաւորութիւնը միանգամայն թուլանում է, տէրութիւնը բաժանվում է երեք թագաւորութեան (Կախէթիայի, Խմերէթիայի և Քարթալինայի և չորս անկախ իշխանութիւնների (Մենգրելիայի, Արևադիայի, Սվանէթիայի և Գուրիայի)։ Այստեղից արդէն սկսում է Վրաստանի քաղաքական անկումը։

1) М. Глушаковъ. Очерки изъ исторіи: Грузія 1901 եւ В. Романовскій. Очерки изъ исторіи Грузіи. 1902:

2) Թագաւորների իշխանութիւնը տարածւում էր, թէիւ ոչ միշտ Սոորին-Քարթալինայի, մասամբ էլ Վերի եւ Կախէթիայի վրայ:

3) Д. Бакарадзе и Н. Березновъ. Тифлисъ въ историческомъ и этнографическомъ отношеніяхъ. 1870 եր. 33 եւ հետեւ եալները։

Վրաստանում գեռ վազ ժամանակներից սկսած (III. գ. Ք. ա.) տիրում էր ֆեոդալական կարգը: Տոհմապետութիւնը իշխանութեան փոխուելով և էրիստաւութիւնն առաջանալով, ֆեոդալիզմը հաստատ հող է գտնում: Թագաւորութիւնը շարունակ թոյլ անզօր լինելով, էրիստաւուները մեծ արտօնութիւններ են ձեռք բերում և երկրում առաջանում է կատարեալ ապակենդրոնացում: Էրիստաւուները բաւական նման են Եւրոպական Սեներներին և համարեաւ թէ նոյն իրաւունքներն ունեն: Վրաստանի սօցիալական կեանքի մասին մինչև XIV դարը կանոնաւոր տեղեկութիւններ չունենք: Կարելի է այսքանն առել, որ այնտեղ Փարնաւազդ թագաւորի ժամանակից սկսած գոյութիւն ունէին հետեւեալ դասակարգերը. 1. մտաւարներ կամ թաւադներ (իշխաններ), 2. Ազնաւուրներ (ազնուականներ), 3. Մոկալակներ (քաղաքացիք), 4. Գլեխներ (գիւղացիք): Թաւադները հին տոհմապեանների սերնդից էին: Սրանցից էին նշանակւում էրիստաւուններ: Թաւադները մեծ կալուածքների տէր էին և իրանց կալուածքները կառավարում էին անկախ, ինքնիշխան: Սրանց ենթարկւում էին իրանց կալուածքների վրայ ապրող թէ գիւղացիները և թէ մանր ազնուականները, որոնք սրանց վաստաններն էին:

Ազնաւուրները զինւորականներ էին, նման երովական ասպետներին: Սրանք ունէին հողեր, իրանց գիւղացիները, որ ստացել էին թագաւորից կամ թաւադից: Հողը, կալուածքը ումից ստացել էին, նրան էլ ենթարկւում էին և պարտաւոր էին զօրքով օգնել: Մոկալակների կամ քաղաքացիների սօցիալական դրութեան մասին հաստատ տեղեկութիւններ չկան: Քաղաքները Վրաստանում ընդհանրապէս շատ սակաւ էին, այնպէս որ քաղաքացիք այնքան էլ առանձին գեր չէին խաղում:

Գլեխները կամ գիւղացիք ազատ շէին և ենթարկւում էին թագաւորին, թաւադին կամ ազնաւուրին: Հողը պատկանում էր տէրութեան և ազնուականութեան: Գիւղացիք պարտաւոր էին իրանց հողատէրերին որոշ տուրքեր, հարկեր վճարել և անձնական ծառայութիւններ կատարել:

Հետագայում Վրաստանում առաջ է գալիս և մի նոր դասակարգ, որ է հոգեորականութիւնը (քրիստոնեայ): Սա հետզհետէ մեծ գերք է ձեռք բերում, խոշոր կալուածքները տիրանում և նոյն իրաւունքները բանեցնում, ինչ որ ազնուականները:

XIV դարից սկսած Վրաստանի սօցիալական կեանքի մասին տեղեկութիւններն աւելի առատ են: Այդ մեզ հաղորդում են իրաւաբանական երկու յիշատակարաններ, ինչպէս են Գրի-

գոր — Պայծառափայլի «Դղեգլիս — Դեբայ» Օքնոգիրքը և Ամեցից-ի (այժմեան Ախալցիայի, Ախալցիակի, Արգահանի տեղը) Էկկի և Ագբուգի իշխանների տուած օքնքները (XIV—XIV)<sup>1</sup>:

Ըստ «Դղեգլիս — Դեբայ» Վրաց ժողովուրդը բաժանւում է հետևեալ գասակարգերի. Եթիստաւների, մսախուրիների (կոռավարիչներ), Խելստաւների (հովտի կառավարիչներ), Ցիսիստաւների (բերգի կառավարիչներ), Եկեղեցու սպասաւորների, արքավանների ընտիր մարզիկ), Եկեղեցական զեւղացիների և մոռջիսների (հասարակ ժողովուրդ): Աւելի շատ աեղեկութիւններ տալիս են Բէկի և Ագբուգի իշխանների կազմած օքնքները: Ըստ զրանց ժողովուրդը բաժանւում է երկու գասակարգի. արտօնեալների և ստորագրեալների: Արտօնեալների մէջ էլ ըստ ծագման, կալուածքների մէջութեան և պետական ծառայութեան որոշ ատարերութիւններ է դըւում: Արտօնեալները բաժանւում են երկու կարգի. Դեղ — Երուների (իշխանների) և ազնաւուրիների (ազնուականների): Դեղ — Երուլին խոշոր կալուածատէրն է. ունի իր բերգը, վանքը, վասարները և գիւղացիները: Նա իսկական Արոպական սիննեօր է: Ազնուականները բաժանւում են երեք կարգի. 1. թագաւորական տան (ցիերիւ), որոնք թագաւորից կախումն ունեն, 2. Աթարեէկական, որոնք երկրի կառավարչներ, աթարեէկեցից կախումն ունեն և 3. որոնք երուլիական, որոնք իշխանից (դեղերուլուց) կախումն ունեն:

Հասարակ ժողովուրդը բաժանւում է երկու գասակարգի. ազատ սեփականատէրերի և ստորագրեալների: Առաջինները կարող են իրանց հողի հետ վարուել այնպէս, ինչպէս կամնենում են. կային նրանց մէջ և այնպիսիները, որոնք անձնապէս ազատ էին, բայց հողով կապուած (սեփական հող չունէին): Ատօրագրեալները սեփական հող չունէին, ազատ էլ չէին և ամրողջովին ենթարկւում էին ազնուականներին:

Վրաստանը XV գարկից սկսած մինչ XVIII գարեի վերջերը հանդիսանում է մի ապակենգրունացած, ուժապառ տէրութիւն: Խնչպէս յիշուեց, վրաց տէրութիւնը XV գարում բաժանուել էր երեք թագաւորութեան (Կախէթիայի, Խմերէթիայի և Քարթալինայի) և չորս անկախ իշխանութիւնների (Մինդրէթիայի, Գուրիայի, Սքսագիայի և Սվանեթիայի): Այս բաժանումը շատ չնշին մոլորդութեամբ (կախէթիան և Քարթալինա ԽVIII գարում միացել էին և մի տէրութիւն էին կազմում, իսկ Քար-

1. А. Хахановъ. Политическое и культурное состояніе Грузіи въ XII до XVIII в. (Журн. „На Кавказѣ“. 1909 № 3).

թալինայից Սաատաբեգո կոչուած մասը քաժանուել էր և անկախութիւն ձեռք բերել) շարունակում է մինչեւ ռուսական տիրապետութիւնը: Վրացական այս ըօլոր տէրութիւններն էլ շատ խղճուկ վիճակի մէջ էին: Մի կողմից շարունակ իրար հետ էին կռւում, ներքին խռովութիւնները, գաւագրութիւնները իշխանների և ազնուականների կողմից առհասոարակ անպակաս էին, իսկ միւս կողմից էլ տաճիկները, պարսիկները և լեզգիներն են սկսում նեղել: Տաճիկները և պարսիկները այնքան առաջ են գնում որ Վրաստանում սկսում են կարգադրութիւններ անել արևմտեան Վրաստանը ընկնում է տաճիկների, իսկ արևելեանը պարսիկների իշխանութեան տակ: Շնորհիւ երկրի քաժան քաժան լինելուն, զօրեղ ապակենարոնացման, անվերջ արշաւանքներին ժողովրդի գրութիւնը հետզհետէ անտանելի է դառնում: Ժողովրդին անվերջ կեղեքում, հարստահարում էին թէ թադաւորը, իշխանները և թէ օտարները: Ժողովուրդը գարձել էր ոչխարի հօտ, կորցրել էր ամեն մի իրաւունք և սարկութեան աստիճանի հասել: Շնորհիւ դրան Վրաստանում առաջանում է ճորտութեան ամենավատ տեսակը, որը գուցէ նոյն իսկ եղակի է: Մարդը դարձել էր անշունչ ից, ապրանք և հետը կարելի էր ուզածին պէս վարուել: Մարկարաճառութիւնը Խմերէթիայում, Գուրիայում, Մինդրէլիայում սովորական ընոյթ էր ստացել, տեղային ազնուականութեան համար եկումուտի ամենաշահաւելէտ աղբեւրն էր: Այսպէս Քաթթալինիակի թագաւորներից մէկը գանդատում է (1639թ.), որ Մինդրէլիայի ազնուականութիւնը տարեկան 10—15 հազար երեխաներ է վաճառում, չհաշուած սուլթանին, փաշաներին և ուրիշ անձանց արած մարդկային նուէլները: Նոյնը անում էին մնացած տեղերի ազնուականները, նոյն իսկ եպիսկոպոսները<sup>1</sup>:

Ամանք այն կարծիքին են, որ ճորտութիւնը Վրաստանում այս տեսակի խիստ գոյն է ստացել միայն XVIII դարում, իսկ առաջ շատ մեղմ է եղել: Կասկած չկայ, որ վերջին ժամանակներում ճորտութիւնը տարեկան 10—15 հազար երեխաներ է վաճառում, չհաշուած սուլթանին, փաշաներին և ուրիշ անձանց արած մարդկային նուէլները: Նոյնը անում էին մնացած տեղերի ազնուականները, նոյն իսկ եպիսկոպոսները<sup>2</sup>:

1. Դ. Бакарадзе и Н. Березновъ. а. а. О. Եր. 53—54.

2. Романовский. Очерки изъ истории Грузии. Ер. 426.

մեն տեղ, նոյնպէս և այստեղ որոշ զարգացում է կը ել և նոյն իսկ ընդհանութ գծերով այդ տալ բաւական գժուար է: ձոք տութեան մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ունենք XVIII դարից սկսած: մենք էլ այստեղ տալիս ենք այդ:

XVIII դարում Վրաստանում տիրում էր կատարեալ անարշիա: Օքէնքը, իրաւունքը միանդամայն կորցրել էին իրանց նշանակութիւնը, տեղի տալով բռնութեան, կամայականութեան: Կառավարութիւնը բռնակալական - օլիգարխիական էր, կամ աւելի ճիշտ, բռնակալական - քառոսային, ինչպէս այդ անուանում է մի պատմագէտ: Թագաւորը ուժեղ էր, եթէ նա ազնուականութեան հետ հաշտ էր, եթէ խրախուսում էր նրանց շահատակութիւնները, կեղեցումները: Ազնուականութիւնն այդ շրջանում բաժանւում էր երեք կարգի: Էրիստաւների (գեգեռուլների), թագաւորների և ազնաւուրների: Էրիստաւներն ամենազօրեղ, աչքի ընկնող ֆէոդալներն էին: Երկրորդ տեղը բռնում էին թաւաղները, որոնք նոյնպէս մեծ կալուածքների տէր էին: Խոկ ազնաւուրները հասարակ ազնուականներ էին և վասուալական կախումն ունէին թագաւորից կամ իշխաններից: Եկեղեցու պետերն էլ (կաթուղիկոս և եպիսկոպոսներ) համարւում էին առաջին կարգի եշխաններ և նոյն իրաւունքներն ունէին:

Փողովութզը բաժանւում էր քաղաքացիների և գիւղացիների: Գիւղացիները բաժանւում էին չորս կարգի, ազատ գիւղացիների (թարիսան), պետական գիւղացիների (մատխորի), եկեղեցական գիւղացիների և ազնուական գիւղացիների: Ազատ գիւղացիները ամբողջովին կամ մեծ մասամբ հարկերից և անձնական ծառայութիւններից ազատ էին. ազատ գիւղացիներ ունէին թագաւորը, իշխանները և թէ եկեղեցին: Խոկ մնացած գիւղացիները գտնւում էին ճորտական գյութեան մէջ:

Պետական գիւղացիները պետութեան ճորտերն էին: Կախէթիայի և Քարթալինայի կառավարութիւնը, ինչպէս յայտնի է, երբ թէ կենտրոնացած էր. կառավարութիւնը գտնւում էր թագաւորի ձեռքում, իսկ նրան ստորադրւում էին միդվանը և միդվանները, որոնք երկրի կառավարիչներն էին: Քաղաքացիական մասի կառավարութիւնը գտնւում էր սալթուխցիսի կամ պետական գանձապահի ձեռքում: Սրա հետ միդվանը էկը և միդվանները խորհրդակցում էին երկրի գործերի վերաբերեալ, գլխաւորապէս տնտեսական: Նահանգների կառավարութիւնը յանձնուած էր մովլովներին: Սրանցից ոմանք

միմիայն աղմինիոտրացիական իրաւունքներ ունէին, իսկ ոմանք էլ թէ այդ և թէ գատական։ Սրանց նշանակում էր թագաւորը, բայց հետզհետէ մովրովութիւնը ժառանգական ընոյթ է ստանում։ Մովրովները ուսմիկ չէին ստանում, այլ իրանց հշանաւթեան տակ գտնւող ժողովրդից հարկ և տուքեր էին առնում, որոնց մի մասը թագաւորին էին յանձնում, իսկ միւս մասը իրանք վերցնում<sup>1</sup>։ Մովրովների իշխանութիւնը տարածւում էր միայն պետական հողերի վրայ։ Մովրովն իր իշխանութեան տակ ունէր զանազան պաշտօնեաներ, որոնց կամ թագաւորն էր նշանակում կամ ընտրովի էին (նացավալ, քեթառուդա, մամատախլիս և այլն)<sup>2</sup>։

Պետական դիւզացիներից աէրութիւնն առնում էր հետեւեալ հարկերը։

1. Սուրուատ (ծխահարկ) ամեն մի ծխից կամ ընտանիքց առնում էին երեք կոտ (կոտը երկու փութ է) հացահատիկ, երկու կոտը ցորեն, իսկ մեկը գարի։

2. Գուլա (հնձի հարկ), առնում էին հնձի  $\frac{1}{3}$ ,  $\frac{1}{6}$ ,  $\frac{1}{7}$ , նոյն իսկ  $\frac{1}{10}$ ։

3. Կուլուխի (դինու հարկ), առնում էին խաղողի հնձի  $\frac{1}{10}$  կամ  $\frac{1}{7}$ ։

4. Կողիս պուրի (?). վճարում էին ունեսոր գիւղերը։

Հարկերի յանկը լրիւ չէ. կային էլ ուրիշ երկրորդական, անօրոշ, ժամանակաւոր և այլն տեսակ հարկերն։

Բացի հարկերից, պետական գիւղացիները պարտաւոր էին թագաւորի, պետական պաշտօնեաների համար զանազան անձնական ժառայութիւններ կատարել։

Թագաւորը ինքը, լինելով ով մեծ ֆէոդալ, գիւղացիների վրայ նայում էր որպէս ճորտերի և նրանց վրայ նոյն իրաւունքներն էր բանեցնում, ինչ որ ֆէոդալները։ Թագաւորը գիւղացիներին սացի իր համար աշխատացնելուց, կարող էր որան—նրան նուիլսել, վաճառել, որը և տեղի էր ունենում, որպահական էր<sup>3</sup>։

1. Մովրովների ստացած հարկերի և առողջերի մասին անս Пурцеладзе-ի Грузинскія Крестьянскія грамоты. Тифлисъ 1882. бр. 79—80։

2. Б. Романовскій а. а. о. бр. 444։

3. Сводъ материаловъ по изученію экономического быта Государствъ крестьянъ Закавказскаго края. Томъ I. часть III. бр. 5—18։

4. Shu Пурцеладзе. Грузинск. Крестьянск. грамоты.

Եկեղեցին, հոգեորականութիւնը ևս Վրաստանում մեծամեծ կալուածքների տէր էր և եկեղեցական յերարիսիան ըոլորովին նման էր քաղաքական—աշխարհականին։ Կաթողիկոսը և եպիսկոպոսները իրենց կալուածքների վրայ նոյն իշխանութիւնն ունէին, ինչպէս աշխարհակալ ֆէոդալները։ Կաթողիկոսը և թէ բարձր հոգեորականութիւնը հէնց ծագմամբ էլ պատկառ նում էին թագաւորական տան և ազնուական ըտանիքներին։ Կաթուղիկոսն առանձնապէս իւր իշխանութեան տակ ունէր մի շարք նահանգներ։ Եկեղեցական թղթերից<sup>1</sup> երեսում է, որ XVII դարում կաթուղիկոսն ունէր մօտ 237 գիւղ։ Կաթողիկոսն ունէր իր սեփական ագմինիստրացիան, կառավարութիւնը, հարկանանները, զօրքը, գեներալները և այլն։ Պատերացմի ժամանակ զօրքին կամ ինքն էր առաջնորդում, կամ գեներալներից մէկը։ Դատավարութիւնը նոյնպէս գտնւում էր նրա ձեռքում<sup>2</sup>։ Եպիսկոպոսները նոյնպէս իշխանական իրուունքներ ունէին, ունէին իրանց սեփական ագմինիստրացիան, գատավարութիւնը, զօրքը և այլն։

Եկեղեցական գիւղացիները նոյնպէս համարում էին ճորտեր։ Պետական հարկերից նրանք մեծ մասամբ ազատ էին և հարկեր էին վճարում եկեղեցուն։ Բայց այդ, պարտաւոր էին և մի շարք անձնական ծառայութիւններ կատարել։ Սկզբում եկեղեցական գիւղացիների գրութիւնը, ըստ երեսութիւն, շատ թեթև է եղել, գիւղացիները ձգտել են աւելի շուտ եկեղեցու ճորտերը լինել, քան ուրիշների. բայց հետագայում նրանց դրութիւնն էլ հետզետէ վատթարացել է։ Եպիսկոպոսները վերջերում ոչնչով չեն տարբերում աշխարհական իշխաննեւրից. նրանք էլ անխնայ կերպով ճնշում, հարստահարում էին ժողովրդին։ Այսպէս օրինակ Քարթալինիայի թագաւոր Թէյմուշաղը ուուաց Միխայիլ Ֆէոդորովիչ թագաւորին դրած մի նամակում գանգատում է (1639 թ.), թէ ինչպէս Միխաղիլիայում եպիսկոպոսներից մէկը տարեկան 10—12 հազար երեխաների գերսէ է վաճառում, 80 երեխաների տաճիկներին նուիրում, մարդկանց գլխատում, կախաղան բարձրացնում ևայլն<sup>3</sup>։ Եկեղեցական թղթերը նոյնպէս վկայում են, թէ որքան նեղուում էին դիւղացիները եկեղեցու պաշտօնեաներից, որքան խոտացել էր ճորտութիւնը<sup>4</sup>։

1. Պუրցելաձ. Грузинские церковные гуджари (грамоты). Тифлисъ 1881.

2. Д. Бакарадзе и Н. Березновъ а. а. О. եր. 8.

3. Н. Бакарадзе и Н. Березновъ а. а. о. եր. 54.

4. Պუրցելաձ, Грузинс. Ա. ա., գуджари (грамоты) 1861.

Ազնուականների գիւղացիները բաժանւում էին երեք կարգ գիւղ. 1. մոդժալաբների (արևմտեան Վրաստանում). 2. աղատների 3. մերեդերների: Մոդժալաբներն ամենամնշուած, իրաւագուրեկ գիւղացիներն էին: Նրանք գտնւում էին մի տեսակ ստրկական գրութեան մէջ: Առաջ էին եկել պատերազմական գերիներից, ապօրինի ծնունդներից և կալուածատիրոջ անդիւրեկան, ապստամք գիւղացիներից: Սրանք չունեին սեփականութեան իրաւունք. ապրում էին կալուածատիրոջ մօտ և կատարում էին ամենաստոր աշխատանքները: Կալուածատէրը կարող էր նրանց վաճառել, նուիրել, աղջկանը օժիտ տալ են:

Ազատ գիւղացիների գրութիւնը համեմատօքէն թեթև էր.  
Նրանք որոշ ծառայութիւններից, հարկերից ազատ էին: Արևել-  
եան Վրաստանում Նրանց գրութիւնն աւելի լաւ էր, քան ա-  
րևեմտեանում: Սրանք կալու ածառէրերի և ճորտերի միջին տեղն  
էին ըստում: Երբորդ կարգին պատկանողները (մերեգերներներ  
կամ կլիխի կոչուածները) գիւղացինութեան ամենամեծ տոկոսն  
էին կազմում: Բոլոր հարկերը, տուրքերը, ծառայութիւնները և  
այլն մեծ մասամբ սրանց վրայ էին ծանրանում: Կալուածա-  
տէրը իրաւունք ունէր սրանց հողը խլել, վաճառել, կարող էր  
պատժել, միայն մահուան պատիժը վերապահուած էր թագա-  
ւորին: Ճարտերի պարտաւորութիւնները, ծառայութիւնները,  
ըստ եւեօյթին օրէնքով չէին որոշուած, այլ ամեն ինչ հիմ-  
նուած էր սովորոյթի վրայ և մասամբ էլ կալուածատիրոջ կա-  
մայականութիւնից էր կախուած: Ճորտերի ծառայութիւնների  
և պարտաւորութիւնների մասին կան տարբեր տեղեկութիւնն-  
եր և կարծիքներ: Այսուղ զնում ենք Թելաւի ազնուակա-  
նութեան Վրաստանի բարձր կառավարութեան ներկայացրած  
մի յիշատակագիր (1826), որտեղ միաւմի թուած է ճորտերի  
ըոլոր պարտաւորութիւններն ու ծառայութիւնները: Ըստ այդ  
յիշատակագրի, ազնուականների ճորտ գիւղացիները հետեւալ  
պարտաւորութիւններն ունեն: \*

1. Կալուածատիրոջ գիւղատնուեսական ըութը աշխատանք-ներին մասնակցել: Այդ մասնակցութեան չափը չէր սրոշուած, այլ կախուած էր կալուածատիրոջ տնտեսութեան պահանջ-ներից: Պէտք է վարէին, ցանէին, հնձէին, դաշտերը ջրէին, անտառները մաքրէին, բանջարանոցների և այդիների վրայ աշ-խատէին և պլի:

2. Կալուածատիրոջ կամ նրա ընտանիքի անդամներից մէկի ամուսնութեան դէպքում իւրաքանչիւր ճօրտ ընտանիք պարտաւոս էր ըստ իր տնտեսական կարողութեան որոշ հարկ վճարել (5—50 ռուբլի): Նոյնպէս պէտք է հոգային հարուաների

մասին։ Բացի գրանից ամեն մի գիւղ պարտաւոր էր մի կրկտալ։

3. Կալուածատիրոջ մահուան դէպքում հոգալ նրա թաղման ժախըռ և որոշ գումար վճարել։

4. Ընտանեկան բաժանումների ժամանակ կալուածատէրը ստանում է որոշ բաժին։ Եթէ պէտք էր օրինակ՝ երկու եղբաժանել, մէկը և այն էլ լաւը վերցնում էր կալուածատէրը։

5. Հոգալ կալուածատիրոջ գտական ժախքերը։

6. Տղայի կամ աղջկայ ամուսնութեան դէպքում ճորտընտանիքը վճարում էր կալուածատիրոջ որոշ գումար։

7. Ոյրի հնոջ ամուսնութեան դէպքում վճարում էր վեռան։

8. Ե. բաքանչիւր ճորտ ընտանիք կալուածատիրոջ մատակարարում էր աարեկան 4—5 սայլ փայտ։

9. Կալուածատիրոջ համար կառուցուելիք շէնքերի վրայ գիւղացիք պարտաւոր էին աշխատել։

10. Զրօննէքին, Զատկին և ուրիշ տօներին գիւղացիք պարտաւոր էին կալուածատիրոջ տեսակ—աեսակ կերակութներ, ուտելիքներ տալ։

11. Գիւղացիք պարտաւոր էին հիւրասիրել կալուածատիրոջ. նրա ընտանիքին և նոյն իսկ հիւրերին։

12. Կալուածատէրը կարող էր, ըստ իր կարիքի, գիւղացիներից ձու, իւղ, պանիր, հաց, գինի, հաւ, փող և այլն առնել։

13. Բարեկենդանին գիւղացիք պարտաւոր էին կալուածատիրոջ աալ երկու զբուանքայ իւղ և 9 ձու։

14. Հնձից և գիւղատնտեսական միւս եկամուաներից կալուածատէրը ստանում էր որոշ մաս (գալա, կուլուխի, ուռալօխօ և այլն)։

15. Գիւղացիք պարտաւոր էին աշխատել կալուածատիրոջ ձկնորսատեղիներում և ձկնորսութեան վերաբերեալ իրերը նոյն իսկ իրանք պէտք է հոգային (ուռկան, թոկ և այլն)։

16. Կալուածատէրը գիւղացիներից վերցնում էր իր համար զանազան ծառայողներ՝ հովիւներ, հացթուխներ, գոմապահներ, ծառաներ, աղախիններ, դայեակ, խոհարարներ և այլն։ Աղախնուն կալուածատէրը կարող էր ծախել, նուիրել կամ աղջկանը օժիտ տալ։

17. Պատերազմի դէպքում գիւղացիք պարտաւոր էին անորոշ ժամանակով (մինչև պատերազմի վերջը) սայլեր, ձիաներ և պատերազմական մթերքներ մատակարարել։

18. Գիւղացի արհեստաւորները (հիւսն, դերձակ, որմնա-

գեր և այլն) պարտաւոր էին կալուածատիրոջ համար ձըի աշխատել:

19\* Կալուածատէրը կարսդ էր, ըստ իր կարիքի, գիւղացիներից պահանջել գիւղատնտեսական զանազան գործիքներ:

20\* Քաղաքում ապրող կամ առհասարակ բացակայ գիւղացիներն ազատ չեն այս պարտաւորութիւններից:

Այս վերաբերութիւմ է արևելեան Վրաստանին՝ նոյն աւելի խտացած գոյներով գոյութիւն ունէր և արևմտեան Վրաստանում: Բայցի թագաւորից, եկեղեցուց և ազնուականներից, ճորտեր ունէին և քաղաքացիք, նոյն իսկ հարուստ գիւղացիք: Ճորտութիւնը կապուած չէր անպայման հողի հետ, այլ և անձնական ընոյթ էր կրում: Այս արդէն ցոյց է տալիս, թէ որքան խիստ էր ճորտական զրութիւնը: Ճորտութիւնը առաջանում էր զանազան պատճառներից: Մեզ հաստած տեղեկութիւններից կարելի է եզրակացնել, որ այդ բաւական հեշտ կերպով էր տեղի ունենում: Թողնելով անցեալը, որ անյայտ է, ընդհանուր կերպով կարելի է տալ ճորտութեան առաջանալու գլխաւոր պայմանները նոր ժամանուկում: Հիմնուած Դ. Պուրցելաձէի<sup>1)</sup> հրատարակած մի շարք փաստաթղթերի վրայ, կարելի է մօտաւորապէս ասել, թէ ճորտութիւնը ինչ դէպքերում էր առաջանում: Նոր ժամանակներում Վրաստանում ճորտական զրութեան մէջ էին ընկնում զլխաւորապէս երեք դէպքում: 1. զնմամբ, 2. դերութեամբ և 3. պարտքը ըլվճարելով: Բայցի այս գլխաւոր պատճառներից, ճորտութիւն առաջանում էր և ութիւն դէպքերում: Իիսկ չէին իր մի յօդուածում<sup>2)</sup> ճորտական դրութեան մէջ ընկնելու հետեւեալ դէպքերն է թւում:

1. Թագաւորից նուիրած, 2. օտար երկրից գաղթած, 3. պատերազմի դաշտում գերի ընկած, 4. զնած, 5. անտէրերեխանները (խնամողի ճորտն են գառնում), 6. ապօրինի զաւակները, 7. պարտքը ըլվճարողը (պարտատիրոջ ճորտն է գառնում), 8. գողը, 9. ձորտ գեղջկուհու հետ ամուսնացողը, 10. ճորտ գիւղացու հետ ամուսնացող ազատ աղջիկը, 11. ճորտ աղջկայ հետ ապօրինի յարաբերութիւն ունեցողը, 12. սովոր ժամանակ մէկի կողմից խնամած ընտանիքը (խնամողի ճորտն է գառնում), 13. դերութիւնից գնուածը (կնողի ճորտն է գառ-

1• Դ. Պ. Պუրցելազ Գրունսկ. քրեստյանսկ. գրամոտ. Տիֆլիս 1882. նոյիի—Գրունսկ. դվորյանսկ. գրամոտ. Տիֆլիս 1881. նոյիի.—Գրունսկ. ցերկով. ցւջար (գրամոտ). Տիֆլիս 1881.

2. Կիշիձե. Օթերք կрепостного права и крестьянской реформы въ Грузии (Кавказский Вѣстникъ 1902 г. № 6).

նում), 14. մարդասպանութեան մէջ մեղագրւողը, 15. ինքնակամ կերպով: ձորտատէրերի իրաւունքները ճիշտ կերպով որոշուած չեն. նրանց իրաւունքները, կարելի է ասել, որ անսահման էին: Ըստ Վախթանգ VI թագաւորի օրէնտդքի՝ գիւղացիք (ճորտ) իրանց ունեցած—չունեցածով պատկանում են կալուածատիրոջ. վերջինս անսահման իրաւունքներ ունի նրանց վայ, միայն մահուան պատիժ չի. կարող տալ<sup>1</sup>: ձորտը իրաւունք չունի ոչ մի ստացուածք գնել կամ վաճառել, առանց կալուածատիրոջից թոյլաւութիւն ստանալու: ձորտի մահուան դէպում, եթէ անժառանգ է, ստացուածքը անցնում է կալուածատիրոջ, այբին ստանում է շապ քիչ բաժին: Ամենից շատ իրաւազուրկ, նեղ գրութեան մէջ գանւում էին ազնուականները, իսկ համեմատօրէն աւելի թեթև գրութեան մէջ էին եկեղեցուն պատկանողները: Ճորտութիւնից ազատում էին հետևեալ դէպքերում, 1. Իրանց գնելով, 2. պարտքը վճարելով, 3. Տիւնից վերաւորուելու գէպքում (եթէ թեթև է ընտանիքով, իսկ եթէ ծառ է եղբայրներով և ազգականներով), 4. բռնաբարման գէպքում (եթէ տէրը բռնաբարէր ճորտ ազջկան, ամբողջ ընտանիքն ազատում էր և դառնում պետական), 5. ինքնակամ կերպով տէրն արձակում էր. 6. Հարուտահարութիւնից փախչողները: Ճորտութիւնից ազատուածները ստանում էին թարիանութեան թուղթ և ազատ գիւղացիների շարքը դասւում:

Ընդհանուր առմամբ գիւղացիների գրութիւնը Արաստանում շատ ծանր էր. Ժողովրդի մածագոյն տոկոսը, կարելի է ասել, մատնուած էր գառն ստրկութեան: Կալուածատէրերն անխիղճ, անպատիժ կերպով իրենց ճիրաններում խեղդում էին թշուառ ժողովրդին: Տիրում էր կամայականութիւնը, քմահանոյքը: Եւրոպացի ճանապարհորդ Նարգէնը, որ XVII դարում անցել է Արաստանի վրայով, ստոկալի գոյներով է նկարագրում ազնուականների գործած շահատակութիւնները<sup>2</sup>: Եթէ աչքի առաջ ունենանք և այն, որ շնորհիւ թագաւորների անիրաւութիւնների և արտաքին պատճառների ազնուականների թիւն օքէցօր աճում էր, այն ժամանակ պատկերն աւելի լրացած

1. Сборникъ законовъ грузинскаго царя Вахтанга VI, Изданіе С. Френкеля, Тифлисъ. 1883. №№ 258 и 260.

2. Путешествіе Кавалера Шардена по Кавказу въ 1672—1673 гг. Переводъ Д. Носовича.

կրկնել<sup>1</sup>: Արտաքին արշաւանքները, պատերազմները հո սովորական, միշտ անպակաս էին:

Բացի վերև յիշուած գիւղացիներից Վրաստանում գոյութեւն ունէր և դիւղացիութեան մի տեսակը, որը կոչւում է խիզան: Խիզանները կամ խիզանութիւնն ըստ երեսյթին, նոր ժամանակներում է առաջացել: Խիզանը սեփական հող չունի, նա կապալով է վերցնում հողը: Նա կապալով հողը վերցնում է աղնուականներից անորոշ ժամանակով կամ մշտապէս և բացի այդ, նա իրաւունք ունի, ըստ կայացրած համաձայնութեան: օգտուել և կալուածատիրոջ մարդագետիններից, արօտատեղիններից, անտառներից, ջրերից և այլն: Իսկ այդ ամենի փոխարէն նա բոււականաչափ պարտաւորութիւններ ունի: Նա պէտք է, այսուհետ օրինակ՝ 20 օր կալուածատիրոջ համար աշխատէ, 24 սայլ փայտ մատակարարէ և այլն: Եթէ խիզանն իր պարտաւորութիւնները չէր կատարում, այն ժամանակ կալուածատէրը կարող էր նրան արտաքսել և ունեցած չունեցածին (նոյն իսկ տանը) տիրանալ: Բաւականաչափ փաստեր կան, թէ ինչպէս կալուածատէրերը շատ անդամ անիրաւացի կերպով խիզաններին արտաքսում և շահագործում էին, իրանց իրաւունքն ի չարը գործադրելով: Յայտնի է, որ շատ կալուածատէրեր խորամանկութեամբ զէպի իրանց էին գրաւում գիւղացիներին, իրանց անմշակ հողերը նրանց յանձնում և երբ վերջիներս մշակում էին, տուն—տեղ շինում, կալուածատէրերը բոլորովին կամացական կերպով այդ խիզաններին արտաքսում էին և նրանց աշխատանքին և սուացուածքին տիրաւում<sup>2</sup>:

#### Հ. Մաւայելեան.

1. Հերակլ Թագաւորի ներկայացրած ցուցակից (Գէորգեւսկում 1785 թ.) աղնուականների թուի մասին (Կախէթիայում եւ Քարթալինայում) ճետեւեալն ենք իմանում. Թաւաններ 62 ընտանիք, Թագաւորին պատկանող աղնուականներ՝ 418 ընտանիք, կաթուղիկոսին պատկանող՝ 45 ընտանիք եւ իշխաններին պատկանող՝ 486 ընտանիք. Այսանը զիւ Կախէթիայում եւ Քարթալինայում (Տես Բուտковъ. Матеріалы для новой истории Кавказа. 1869 г. Томъ II. եր. 125—127).

2. Խիզանների մասին տես Матеріалы для изученія экономических положеній государственныхъ Крестьянъ Закавказья. Томъ I. եւ Կн. Тумановъ. Аграрн. вопросы и преступление на Кавказѣ Тифлисъ 1901. եր. 57—47.